



## Ասիական զարգացման բանկ

Փոխառություն No. 3293 – ARM: Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Տրանշ 2

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

### Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավեր (ՀՀՆՀ)

### ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### Նվազագույն արժեքի հիման վրա ընտրություն (LCS)

Ամսաթիվ	24 փետրվարի, 2017թ.
Փոխառություն No	L3293-ARM: Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Տրանշ 2
Փաթեթ և վերնագիր	LCS-CS-11-ՔԿՉՆԾ-2: Առևտրի իրականացման խորհրդատվական ծառայություններ
ՀՀՆՀ ներկայացնելու վերջնաժամկետ	27 մարտի, 2017թ.

1 Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) դիմել է Ասիական զարգացման բանկին (ԱԶԲ) Բազմափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Տրանշ 2-ի (ներդրումային ծրագրի) շրջանակներում Առևտրի իրականացման համար մատուցվելիք խորհրդատվական ծառայությունները ֆինանսավորելու խնդրանքով: Երևանի քաղաքապետարանը (ԵՔ) հանդիսանում է իրականացնող գործակալությունը և գործում է որպես ներդրումային ծրագրի երկրորդ տրանշի Գործատու:

2 Երևանի քաղաքապետարանի “Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ” ՀՈԱԿ-ին անհրաժեշտ է խորհրդատու ընկերություն, որ կիրականացնի Փոխառություն 3293-ARM ծրագրի աուդիտի ծառայություններ՝ 2016թ., 2017թ., 2018թ., 2019թ. ավարտվող ֆիսկալ տարիների համար և 2020թ. մարտի 30-ին ավարտվող ժամանակահատվածի համար:

3 Գնումներին առնչվող տեղեկատվություն.

Ընտրության մեթոդը՝	LCS
Ընկերությունը՝	Տեղական
Պայմանագրի տեսակը՝	Միանվագ վճարումով (100%)
Հանձնարարականի տևողությունը՝	28 ամիս
Մեկնարկի նախնական ամսաթիվը՝	Հունիս, 2017թ.
Նախատեսվում է ավարտել՝	30 հունիսի, 2020թ.
Կարճ ցուցակի կազմման նախնական ամսաթիվը՝	Ապրիլ, 2017թ.
Նախահաշվային արժեքը, ներառյալ հարկերը՝	\$131,000

**Խորհրդատուների տեսակները՝** Խորհրդատուն պետք է ունենա աուդիտի ծառայությունների իրականացման 10 տարվա (նախընտրելի է) խորացված փորձ, լինի տեխնիկապես կոմպետենտ և ունենա որակավորված աշխատակազմ: Հետաքրքրված խորհրդատու ընկերությունները պետք է տրամադրեն տեղեկատվություն, որով կհավաստեն, որ որակավորված են ծառայություններն իրականացնելու համար՝ ներառելով նմանատիպ հանձնարարականների նկարագրությունները, ընկերության ընդհանուր կարողությունը և սույն առաջադրանքի համար անհարաժեշտ որակավորումները, որոնք կգնահատվեն նվազագույն արժեքի վրա հիմնված ընտրության մեթոդի (LCS) համաձայն՝ նկարագրված ԱԶԲ-ի *Խորհրդատուների օգտագործման ուղեցույցում* (մարտ, 2013թ., որը ենթարկվում է փոփոխության ժամանակ առ ժամանակ):

4 ՀՀՆՀ-ի ներկայացում

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն միայն Էլեկտրոնային տարբերակով ԱԶԲ-ի Խորհրդատուների կառավարման համակարգի (CMS) միջոցով ոչ ուշ քան 2017թ. մարտի 27-ի:

Ուշ ներկայացված հայտերը կմերժվեն: